

կարդալ ու հաշուել . ասկէ զատ ամէն գործաւոր ալ իրեն յանձնուած մասին հմուտ պիտի ըլլայ . և որչափ մէկը աստիճանով ու պատուով վեր է , այնչափ ալ աւելի գիտուն պիտի ըլլայ . ուստի կալուածքի մը վերատեսուչը պէտք է գիտնայ երկրագործութեան ուսմունքին ամէն մասերը , և մանաւանդ տղոց կրթութիւնը , որպէս զի անոնք ալ իր վիճակին մէջ կրթելով երջանիկ ընեն :

ՂԱԿԵՂԷ՝ շաբաթ Կանելու վրայ Կեղեկութիւն :

ՈՐՈՎՏԵՏԵՒ՝ Կափուէոն Պոնափաութիւն ժամանակը Կաղղիացիք Լիգիացւոց հետ սաստիկ թշնամացած էին , և երկու տէրութիւն կը ջանային իրար նուաճել , ու ձեռուըներէն եկած ամէն թշնամութիւն իրարու կ'ընէին , Լիգիացիք ծովու վրայ աւելի զօրաւոր ըլլալով՝ եկան Կաղղիացւոց նաւահանգիստները պաշարեցին , և մէկ նաւ մը չէին թողուր որ ներս մտնէ ու պաշար հանէ քաղաք . ասով Կաղղիայի մէջ շատ տեսակ բաներուն գինը բարձրացաւ , մանաւանդ շաքարին , խահուէին և բամբակին . անանկ որ մէկ լիպրէ շաքարը ինչուան վեց Փրանքի կը ծախուէր :

() ր մը Կաղղիայի մէջ յանկարծ ձայն մը ելաւ թէ ասկէ վերջը ամենեւին շաքարի նեղութիւն պիտի չըքաշուի . աս բանս մեծ ուրախութեամբ պատճառ եղաւ բոլոր Կաղղիացւոց . բայց մէկ օրուընէ աւելի չքչեց ուրախութիւնը . վասն զի երբոր իմացան թէ ճակնդեղէ պիտի հանեն այնչափ շաքարը , սկսան ծիծաղիլ թէ ան ողորմելի բոյսէն ինչպէս կրնայ շաքար հանուիլ . օտար ազգեր ալ աս բանս լուսելով խնտացին Կաղղիացւոց վրայ :

Բայց Կաղղիացւոց մէջէն անոնք որ աս հնարքս մտածեր էին՝ ամենեւին չյուսահատեցան , հապա ամէն ջանք ըրին , ու ետքը ետքը ճակնդեղէն այնպիսի շաքար հանեցին որ եղեգէ հանած շաքարէն ամենեւին վարչէր մնար : Եւ ոչ միայն Կաղղիայի մէջ ան միջոցին շաքարի նեղութիւնը վերջացաւ , հապա նաև ատեն անցնելով շատ տեղ տարածուեցաւ աս գիւտը :

Հիմա Կաղղիայի մէջ ճակնդեղի համար շատ ընդարձակ երկիրներ ուրոշուած են , ուր որ մասնաւոր հոգով կը մշակեն , ու ետքը առատ շաքար շինելով՝ աժան աժան կը ծախեն . անանկ որ Կաղղիայի մէջ խեղճ գեղացին ալ իրեն շաքարը ունի . վասն զի ատեն մը՝ որ վեց Փրանքի կը ծախուէր լիպրէն , հիմա քսան ստրկի կը ծախուի , բայց անանկով ալ Կաղղիացիք խիստ մեծ վաստակ ունին շաքարէն :

Ճակնդեղէ շաքար շինելուն կերպը խիստ դիւրին է : Լիցան ճակնդեղնէրը կը ժողվեն , ու մէկէն անուաւոր մեքենայի մը անիւներուն մէջ կը լեցնեն , որով բոլոր ճակնդեղնէրը թերթ թերթ կը կտրուին . ան կտրտուքները կառնեն ու հնձանով սաստիկ կը ճգմեն , վազած հիւթը շուտով մեծամեծ խալկիներու մէջ կը հաւաքեն , և աստիճանաբար կ'եփեն ինչուան որ աղէկ մը թանձրանայ , ու կամաց կամաց պաղելով կը կարծրանայ ու շաքար մը կ'ըլլայ որ դիւրաւ կը փշրի , համին կողմանէ եղեգի շաքարէն վար չմնար , գոյն ալ խիստ ճերմակ է . անանկ որ եթէ խիստ ծակծակ չըլլար՝ հասարակ շաքարէն որոշելը անկարելի էր :

Եւ իկայ շատ երեւելի գիւտերէն մէկն է , Կաղղիացւոց մեծ պարծանք , և ուրիշ ազգաց ալ մեծ օգուտ : Ենք առ այժմ աս ընդհանուր տեղեկութեամբ գոհ ըլլալով , ուրիշ անգամ հարկաւոր կը համարինք դնել տեղն՝ ի տեղը թէ ճակնդեղը ինչպէ՞ մշակելու , և շաքարը ինչ կերպով հանելու է :